

բուսական հանքերից մէկը՝ խաղաղական, բայց աւելի ճիշդն ասել համաշխարհային հան-
ձար Երանաբոս Բոսսի:

Բոսսի ծնված է Երանաբոսի թաղամասերում
Խաղաղական Լիւթօն քաղաքում: Կրթական
հարուստ վաճառական էր և իր որդուն ուղարկե-
լ էր իրաւաբանական ուսում տալ: Բոսսի միջնա-
կարգ ուսումնական մասնաճիւղի համալսա-
րանի իրաւաբանական ֆակուլտետը: Գիտական
պարտաւորւնքները նրան չէին հետաքրքրում: Դեռ
փոքր հասակից նա սէր էր դրում դէպի բնութ: Հայրը
լուս ազգով էլ էր նայում որդու այդ ձգտման վրա
և աշխատում էր, որքան կարելի է, արմատական
անել այդ ձգտումը նրա մէջ: Բայց Բոսսի, հա-
կաւակ հօր ցանկութեամբ, թողնելով համալսարա-
նը, միացավ մի ինչ որ դերասանական թափա-
ռական խմբի հետ, ստանալով ամեն մի բնու-
դուրը դպրո համար մի ֆրանկ, նա առաջին ան-
գամ բնու դուրս եկաւ Բալնինայում: Առաջին
անգամից նա աջողութիւն ունեցաւ և շուտով
գնաց Գերմանիա: Այնտեղ նրան տեսնում է մի փա-
մանակ իտալիական հոգեւորական դերասան Գուս-
տա: Մարտին, որ եկել էր այդտեղ իր համար
խումբ կազմակերպելու: Մարտին ուղարկւեցին է
դարձնում երիտասարդ դերասանի վրա և հրաւի-
րում է նրան մանկ իր խմբի մէջ: Մարտին մեծ
ներգործութիւն է ունեցել Բոսսիի ապագայ դոր-
ծունեութեան վրա: Նա ասում էր Երանաբոս
ունի մեծ տաղանդ, բայց ոչինչ հասկացողութիւն
բնական արուեստի վրա, նրան հարկաւոր է անց-
նել լաւ և լուրջ շօշուս և եւ նրանից մեծ թա-
րակական մարդ կը չլինի:

Մարտին մի ամբողջ
տարի պարապում է Բոսսիի հետ: 1852 թ-ին
Բոսսի սկսում է խաղալ Միլանի թատրոնում,
որ խաղալիս գլխաւոր բեմերից մէկն էր համար-
վում: Այդ ժամանակից նա սկսում է հոգեւոր
1855 թ-ին, Պարիզի առաջին ցուցահանդի-
սի ժամանակ, նա հրապարակում է խաղալ երեւելի
դերասանուհի Ռիտորիի հետ միասին: Աջողութիւ-
նը ահալին էր: Այնուհետեւ նա գնում է Վիեննա,
մասնաւորապէս մի շարք ներկայացումների, որոնք
բացառապէս բաղկացած էին իտալական դրամա-
տուրգ Գալտոնի պիէսաներից: Այդ ժամանակից
նա ինքն իր համար կազմակերպում է խումբ և
սկսում է մեծ աջողութեամբ ներկայացումներ
սալ խաղալիս զանազան քաղաքներում: 1865
թ-ին նա նորից գալիս է Արեւելից Ռիտորիի հետ
Պարիզ մասնակցելու Comédie Française թա-
րոնում կորնելի ծննդեան երկուհարիւրամեակի
պատմական հանդիսարար ներկայացումներին: Այ-
նուհետեւ նա գնում է Վիեննա և գերմանական ու-
րիշ քաղաքներ: Վերադառնալով հայրենիք, նա
սկսում է ուսումնասիրել Շեքսպիրի պիէսաները և
1869 թ-ին խաղաւորում նա առաջին անգամ խա-
ղում է Շեքսպիրի պիէսալուսում, այն է Բոմբոլի: Դրան
Այդ ժամանակից նա իրան նուիրել է Շեքսպիրի դը-
րուածներին, և յիշելով ամբողջ աշխարհը՝ նա
մեծ հանձնարով ժողովուրդին բացատրում է հանձնա-
րից անգլիացու գրութեանը:

Բոսսի բացի հանձնարից դերասան լինելուց,
յայտնի է և իրեն հեղինակ: Կրթականները մեծ
աջողութեամբ խաղացվում են խաղալուստ: Նա
գրել է և զեղարուստական քննադատութիւններ:
1887 թ-ին նա հրատարակեց երկու մեծ հատո-

րով իր յիշողութիւնները «Quarant'anni di vita
artistica» վերնագրով: անցեալ տարի նա հրատա-
րակեց իր յիշողութիւնները մի հատոր նա Յիշո-
ղութիւնները հասցրած են մինչև ութսունական
թեւականների սկիզբը և հետաքրքրւողը այդտեղ
կարող է գտնել թէ կենսագրական տեղեկութիւն-
ներ և թէ այն տպագրութիւնները, որոնց Բոս-
սի դուրս է բերել իր երկարամեայ կենսաբի ժա-
մանակ, և թէ այն հայեցակէտերը, որոնց ունի
հանձնարից դերասանը՝ թէ դերասանութիւն
առհասարակ հասարակական կազմակերպութեան
մասին:

ՆԱՍՏԱԿ ՆԵՐՈՒՆ-ԱՍՏԱՅՑ

Մայիսի 18-ին
Քաղաքի դերը, որը 3 վերստ հեռու է այստե-
ղից դէպի Երան, ընկած է Հրադան գետի հիւ-
սիսային եղեղում և չընկալաւ իր բարձրագոյն
լեւեռներով և ժայռապատ բլուրներով: Այդ դերը
ժայռապատ ձորափորում լինելով, ներկայացնում
է աւելի տխուր և խուլ, քան թէ ուրախ տեսա-
րան: Միմիայն Զանգուն (Հրադան գետը) է, որ
իր փրկումն կոհակները իրացնողից գոյնումով
անխնայ հեղեղում է դնել խուլ անկիւնները:
Գիւղի հարաւային կողմից 1/2 վերստ հեռավորու-
թեամբ, ձորակի բարձրաւանդակ քարափի կող-
քով, ձգվում է արքունական ճանապարհը, խնու-
ղին:

Հասարակութիւնը այդ դերում գրեթէ երկու
որոշ կուսակցութիւնների է բաժանւած այժմ:
Կրանցից մի մասը, որը 3 տարի է արդէն կա-
ռավարութեան թողութեամբ դուրս է եկել
գիւղից և սուս չլինի արքունի ճանապարհի վրա
բնակվելու համար, մոտ 30 տուն ժողովուրդ
այժմ բնակվում է այդտեղ: Անցեալ տարի այդ
խակ ժողովուրդը խնդրամատոյց եղաւ հողեր
խանութեան իրանց համար մի նոր եկեղեցի կա-
ռուցանելու, պատճառ որ հին եկեղեցին համ
հեռու է մնում իրանց նոր բնակութեան տեղից,
համ է լաւթուր դրութեան մէջ է գտնւում, որը
անշուշտ կարօտ է նորոգելու: Այժմ նոր եկեղե-
ցին կառուցվում է և շուտով պատրաստ կը լինի
ժածկելու: Բայց միայն այդ սակաւթիւ արքա-
տիկ ժողովուրդի ներկայիս միջոցները զուգէ չը
ներեն, ինչպէս հարկն է, հողալ եկեղեցու ունե-
ցած պակասութիւնների համար, մասնաւոր
միւս կուսակցութիւնը դէմ է այդ բանին և հետե-
ւապէս ոչ մի կողմից օգնութեան չէ համար
ներանց այդ նորակառուց եկեղեցու շինութեան
գործում: Հաւանական է ասել, որ այդ նորակա-
ռուց եկեղեցին ուրիշ կողմից ևս կարօտ կը լինի
կողմնակի անձինքների օգնութեամբ: Այդ նպա-
տակով, ինչպէս լուս է ներ, Կարաչիպալի չըմանի
գործակալի տուած չըմանութեան կողմնակի, որը
արժանացել է հողեր իշխանութեան վաւերաց-
ման — ժողովուրդը իր մի քանիսնայի նախա-
ձեռնութեամբ գիծում է չըմանալ գիւղերը՝ դա-
մական կամ ներկայիս օժանդակութիւն ինդի-
ւու համար, յորտու նորակառուց եկեղեցին Մի
քանի օրից յետոյ Կարաչիպալի ժողովուրդից աւել
ունեւորները պիտի դնան մի մի սալով փայտ
կրկու Գիւղնայի անտառից, եկեղեցու տանիքը
ժածկելու համար: Պէտք է ասած, որ այդ սակա-

ւաթիւ և մի և նոյն ժամանակ աղքատ հասարա-
կութիւնը ոչինչ ջանք չէ խնայում մինչև առաջի-
կայ աշխարհ եկեղեցու շինութիւնը բարձրովին
վերջացնելու և օժեւուն պատրաստ անելու հա-
մար: Յանկալի է, որ Կարաչիպալի դաւառական
գտնված բարեկամ պարօնները չը դնան օդ-
նութեան ձեռք կարկառել դէպի այդ նորակա-
ռուց եկեղեցին:

Անցեալները Եայջի գիւղացի մի քանի կին ու
աղջիկներ գնում են դաշտը բանջար քաղելու հա-
մար: Բայց երբ նրանք բարձրանում են Դաղկա-
ձորի լեռնաշղթայի Էլչակ-Մէլդան կոչված բարձ-
րաւանդակ իւրաքանչիւր, այդ միջոցին յանկարծ
եղանակը փոխվում է — միայն համարում մշուշ
թուփում և սկսում են տեղալ սաստիկ անձրեւ,
ձիւն և վերջը կարկուտ, որոնք միշտ անպակաս
են այդտեղից և որոնց տակ մարդիկը և անկա-
րող լինելով վերադառնալ տուն, սառչում են
սաստիկ ցրտից և մեռնում: Թշուառները 4 հոգի
էին, որոնցից երկուսը կին, իսկ միւս երկուսը
աղջիկներ էին:

Պէտք է աւելացնել, որ բանջարաքաղ դնալու
սովորութիւնը մի վարակիչ ախտ է դարձել գիւ-
ղացի իգական սեռի համար, որոնք ամեն օր
դուրս են գալիս հանդը բանջարաքաղի:

ՆԱՍՏԱԿ ԳՕՐԻՍԻՑ

Մայիսի 15-ին
Ամսիս 9-ին Դուշուց հասաւ Գօրիս ֆրանսիա-
ցի անթրոպոլոգ և աղագէտ պ. Դանտր իր կնոջ
հետ:

Ճանապարհորդները գլխաւորապէս հետազոտում
են հնութիւնները, վանքերը, եկեղեցիները, հաւա-
քում են զանազան տեսակ հնագիտական հնու-
թիւններ, վերցնում են նշանաւոր քարերի և
գերեզմանների վրա քանդակված տարեգրիւնների
պատճէնը, հանում են մարդկանց տիպերը (գլխա-
ւորապէս գիւղացիների), չափում են հատկանիշը,
նկարում են քաղաքները և գիւղերի դիրքը, տեսա-
րանք և գլխաւորապէս այնպիսի տեղերում, որ-
տեղ կան հին քանդակաւոր անդրանիկներ, ամրոցներ և
այլ ուրիշ յայտնի նշանաւոր գիտական հետա-
զոտութիւնների համար հետաքրքրել բանք:

Դանտր իր դարմանալի լուսանկարների պ.
Դանտր հանում է մեծ քանակութեամբ պատկեր-
ներ և արժանի յիշողութեան տեսարաններ: Պ. և
տիկին Դանտր իրանց անթրոպոլոգիական աշխա-
տարիւթիւնը կատարում են հայ և թուրք աղագ-
բնակութեան վրա: Դանտր անալիզի պ. Դանտրի
հետ նա մեղ ցուց առեց իր լուսանկարով
դուրս բերած պատկերները, որ բաւական քանա-
կութեամբ տեսնում է Դանտրի Լիւթն քաղաքի
թանգարանի համար, որի գլխաւոր տեսուչն է
պարոնը:

Պ. Դանտր նկարեց Գօրիսը (միայն գիւղի
մասը) և 20 գիւղական մարդկանց տիպերը,
չափեց նրանց հասակները և մարմնի գլխաւոր
մասերը: Նոյնպէս նկարեց Գօրիսից 3 վերստ հե-
ռավորութեամբ գտնվող մի քանիք վանք և
քանդակ հին գերեզմաններից մի քանիք, և վեր-
ջապէս վերցրեց 4 հատ մարդկանց զանգեր: Օ-
րուս քաղաք մեղանից խմանալ տեղիս բնակիչների

ինչպէս կարելի է սալօժոժ մի տեսակ խոս-
քեր գործ ածել, դուրս արեք սալոսում չը
կրթված անկրթ ըթիւպաժարուն....»

Պարոնները կարող էր ուրեմն, ամեն տեսակ
կեղտոտութիւն անել կենսից մէջ, միայն թէ
կրթի, սալոնական ձեւը պահպանեք....

Կարելի է, օրինակ, մեծ մեծ խոսքեր արտա-
նել հասարակաց փողերի մասին ճիշդ հաշի-
տալու վերաբերմամբ, բայց երբ որ հաշի տուողը
մի որ և է Արեւմտեանց պէտք է լինի, այն ժամա-
նակ խնամութեան համար կարելի է, ընդհակա-
ռային, պաշտպան հանդիսանալ հաշի չը տալուն,
պաշտպան հանդիսանալ հաշի մերժող Արեւմտե-
անցի....

Եւ եթէ այդ տեսակ անաղիւ վարմունք «ան-
աղիւ» անուանեք՝ ձեզ կասեն.

Աւելցնեք, ինդիւս, որտեղից էք գալիս, անտա-
ռից, թէ ախտից, միթէ ընդունված է ուղղակի
«անաղիւ» անուանել մի անաղիւ վարմունք....
հանցեք ձեւ կոչիւնները, պարոններ, գրական
սրբութեան մէջ մանկուց, գրական սուրբ ստպա-
րիւղի վրա ոտը կոխելուց առաջ....»

Թիւր, թէ արական և թէ իգական սեռը միասին,
հարցրեց ինչ տեսակ հիւանդութիւններ են ամե-
նից շատ լինում մեր կողմերում և ինչքան տոկոս
են կազմում:

Ճանապարհորդները շատ զոհ են այն երիտա-
սարդներին, որոնք իրանց գիտական հետազոտու-
թիւնների ժամանակ օգնութիւն են հասցրել, ցույց
տալով նշանաւոր և հետաքրքրի տեղեր, նոյնպէս
և այն անձերին, որոնք ճանապարհորդութեան
ժամանակ սիրով են ընդունել նրանց:

Հիւրերը մնացին մեղ մոտ 5 օր և այստեղից
չարժանակելու են իրանց ճանապարհորդութիւնը
դէպի Երանի: Նախադր, անցնելով Գարաբլի-
սայի, Տաթիւ, Կաւարտի հանքերի և Միգրիի ու
Օրդուբադի վրայով:

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիւր, 21 մայիսի
Անցեալ ապրիլի 23-ին իմ նախաձեռնութեամբ
յօդուտ պ. Լ. Մ. Ա. տուած ներկայացումից մուտք
եղել է 725 ռ.: Այդ գումարից վճարված է պ.
Փիլիսոփայ թատրոնի վարձ և վարձատրութիւն
ֆրանսիական խմբին 300 ռ., ծախված տոմարկ-
ների համարժեք որոշված տուրք թիւթիւթի աղ-
քատների համար պ. Երանաբոսի հանգանակ
թատրոնի կասալի միջոցով 34 ռ. 90 կ., իսկ
մնացած 391 ռ. 10 կ., որից 300 ռ. դուռ դրամ
և 91 ռ. 10 կ. ապաւինների անուանացուցակ
յանձնված են պ. Լ. Մ. Ա-ին: Ապաւինները մնում
են ամենակատանելի անձնաւորութիւնների վրա և
հետաքրքրելովները կարող են դիմել պ. Լ. Մ. Ա-
ին, իսկ միւս ծախսերը օրինակ 3,500 հատ լիբ-
րէտի և պրօգրամի ապագրութեան, թուղթ և
այլ մանր-մուսր ծախսեր, առանց բացառութեան
ես իմ վրա եմ առել: Լիբրէտո-պրօգրամները
տարածված են «Մշակի», «Труд», և «Ար-
ձագանքի» համայնների հետ: Թիւթիւթի բաժանորդ-
ներին և խանութներում:

Որովհետեւ «Տարալի» նախորդ Ք-ը բացառա-
պէս նուիրված էր պ. Գրիգոր Արծրունու 25-ա-
մեայ գրական գործունէութեանը և այդ Ք-ում ոչ
միայն կողմնակի յօդուածներ, այլ մինչև անդա-
յայտարարութիւններ էլ չը գեղեցիկեցին, այդ իսկ
պատճառով այս հաշիւը տպագրում ենք «Մշա-
կում»:

Տ. Կարապետեց

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Կ. Պօլիս, 10 մայիսի
Լուր հասած էր մեղ արդէն թէ մայիսի վեցե-
րորդ օր պիտի կատարուի հանդիսապէս ձեռն դա-
ւաւոր քսան և հինգ ամսակը: Այդպիսի քառորդ
դարձ չըմանում դուք պնդելով, աշխատելով վա-
տակած էք իբրեւ գրական աղատ մշակ, հայոց
ժողովուրդի մոտաւորական աշխարհ լուսաւորելու
համակրութիւն:

Գուր գիտեք, բախտ մեղ դաջած է կենդանի
ձայնով ու ներկայութեամբ մասնակցել ու պատ-
ւել այդ ցանկալի հանդէսը, ինչ միայն բաժին կը
մնայ մի գրով ու հոգով ձայնակցեմ այն ամեն
աղագայաց, որ ի հանդէս խմանելով պատկառելի

Այս դուք, թշուառ փարիսեցիք, կեղծաւոր-
ներ....

Մեղ էլ մնում է միայն ձեզ հետ խօսել Պէպօի
խօսքերով (տեւ Ստանդարտացի «Պէպօ», էր. 75).

—Արք օրթում կի թէ դրականութիւնը սրբու-
թիւն իս համարում, օրթում կի էլի, մարթ կու-
լիս օրթում կուտիս....

Եւ երբ որ դուք, գրական նախալ Արութիւն-
ներ, թշուառ կեղծաւորներ, անաւօթաբար յանդը-
նում եք պատասխանել:

—Օրթում, հաւատ, Աստուծ, երգիք, իմ
վարթիկեանց արելը գիտեմալ վուր գրականութիւնը
սրբութիւն իմ համարում....

Այն ժամանակ գրական Արութիւնների բերա-
նից այդ սրբապղծութիւնը լսելով, մեղ ուրիշ քան
չէ մնում անել, կիթ ոչ Պէպօի հետ միասին բացա-
կանել:

—Այ Աստուծ, երգիք ու թու ասած գրական
սրբութիւնը խուով կենալ գլխիկը....»

ԱՍԻՍՏԻ

կը լինեն փառաւոր տօնախմբութեանը, որոց հետ և եւ կը յաւելուի ձեռք համար մաղթել առողջ միտք, հոգեկան զօրութիւն, առողջ խորհուրդ և գաղափար, որ մի նուիրական ուխտ է հասարակաց պաշտօնին համար, առողջ և երկար կեանք, մինչև համեմէ կրկնակի քսան և հինգ ամսակի շրջանը: Այլեւս և տեսնաք աչքով հայերի բարգաւաճումը:

Իսկ ինձ համար միայն չէ եթէ չեմ տեսնար, զի եօթնամասնակի գաղաթէն զորութեամբ դէպի գերեզման գնում եմ արագ արագ, բաւ է որ ուսմանիդ շրջանը: Այլեւս և տեսնաք աչքով հայերի բարգաւաճումը:

Իրիմեան Հայրիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ի տօնի առիթով ստացանք չնորհաւորական հեռագիր ԽԱՐԿՈՎ քաղաքից, պրոֆէսոր Բժշկական Հետեանից:

ՕՂԷՍԱՅԻՑ հեռագրում են տեղական ուսուցիչներին, որ Էրեւանի Բոսի ճանապարհ ընկաւ Օղէսայից դէպի Բաթում «Յետաքննիչ» շաբաթական թերթի միջոցով ճանապարհ էր դնում աշխարհահռչակ ողբերգական դեպքերին ողբերգական թաղանթներով: Թաղանթական օրէկսարը նուազում էր խաղական աղգային մարշ:

«НОВОЕ ОБОЗРЕНИЕ» քաղաքի հաղորդում են, որ մայիսի 20-ին վախճանից Պարիզում, որտեղ նա գնացել էր Բժշկական համար Պետերբուրգի յայտնի հարուստ, Էրեւանի հայոց դպրոցի հիմնադր, Մկրտիչ Սանասարեան: Որքան միջ յայտնի է, հանդուցեալը 72 տարեկան էր:

Կովկասեան աշխարհագրական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է «Кавказ» քաղաքի մի չնորհաւորական հեռագիր է ուղարկել հայր Գեորգի Ալեքանին, նրա գրական յիսնամիայ յօդակների առիթով:

ԲԱԳՈՒՅԻՑ մեղ գրում են. «Ամսի 18-ին կայացաւ Բաղրի «Հայուհեաց բարեգործական» նորակազմ ընկերութեան ընդհանուր ժողովը: Զորութիւն նիստը, որտեղ վճռուեց մինչև կանոնադրութեան հաստատելը, զինել վեհապետ Կաթողիկոսին, տեղիս ծխական օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան միջոցով խնդրելով որ տեղիս օրիորդաց դպրոցի հիմնադրը բաժանմանը աւելացվի և վեցերորդ լրացուցիչ բաժանմունքը, ապա ձեռագործի մասը ամբողջապէս յանձնվի նորակազմ ընկերութեան անդամակիցների ղեկավարութեանը»:

ԿԱՐԱՄՈՒՅԻՑ մեղ գրում են. «Այստեղ սկսում են համարձակ գործեր երևալ. երկրորդ տունն է արդէն որ գործը կողոպտում են, առանց վականքների ձեռք տալու: Նկատելի է որ չարագործները զսպում են պ. նահանգապետի ներկայութեան ժամանակ և աւելի յանդուգն են դառնում նահանգից նրա բացակայութեան ժամանակ: Այս քաղաքի նահանգապետ, պ. Տօմիչ, թիֆլիսումն է»:

Մեղ գրում են ԲԱԳՈՒՅԻՑ որ պ. Կարա-Մուրզայի երեցիկ խումբը դիտաւորութիւն ունի մայիսի 18-ին ճանապարհ ընկնել Բաղրից դէպի Գանձակ և թիֆլիս, այդ երկու քաղաքներում կոնցերտներ ապաւ համար, երբ յանկարծ հեռագիր ստացան թիֆլիսից թէ մինչև Բոսիի գալը, արդէն տիկին Սալինա եկաւ. թիֆլիս և ներկայացուցաներ է տալիս մեր քաղաքում Պ. Կարա-Մուրզայի խումբը ինքն այնքան ներկական միջոցներ չունի, որ կարողանայ գալ մեղ մօտ, յոյս չը դնելով կոնցերտներից ստացվելի արդիւնքի վրա, իսկ փորձել մրցելու Սալինայի և Բոսիի հետ մեր երեցիկ խումբը չէ վստահանում: Այժմ Կարա-Մուրզա իր խմբով Փիթերսբի շոգնատու ուղևորվելու է մայիսի 26-ին Կասպից ծովով դէպի Աստրախան, որտեղ մի երկու կոնցերտ պիտի տայ. ապա այգուկից գնալու է Յարկին և Բոսիով քաղաքները:

ԿԱՐԱՄՈՒՅԻՑ մեղ գրում են. «Ամսի 13-ին տեղիս երկրասարքների կամեցան հեռագիր ուղարկել հ. Ալեքանին: Բայց մինչև իմացան թէ քանի արժէ Վ. նիցիա ուղարկելը հեռագիր իրաւքանչիւր բառի վճարը, արդէն օրն անցաւ: Այժմ «Մշակ» միջոցով չնորհաւորում ենք նահապետի յիսնամիակը:

և ցանկանում ենք նրան արեւատութիւն, ի պայծառութիւն մեր գրականութեան»:

Հաղորդում ենք մի քանի կենսագրական տեղեկութիւններ հանդուցեալ Սանասարեանի մասին: Սանասարեան ծնվել է 1818 թ. ին: Նրա հայրն էր Վանում Սանասարեան ընտանիքին պատկանող Սարգիսը, որը զեն վանում եղած ժամանակ նշանվել էր Էրեւանից Արծրունի Գեորգի աղջկի Մարիամի հետ: Երբ Գեորգ Արծրունին վանից ընտանիքով տեղափոխվեց Ռուսաստան, նրանց հետ տեղափոխվեց և Սարգիսը, որը և Ռուսաստանում ունեցաւ Մկրտիչ անունով մի որդի. դա նայն իսկ այժմեան հանդուցեալ Մկրտիչ Սանասարեանն է: Սանասարեան սկզբում ղնտնաւորական ծառայութեան մէջ մտաւ, բայց յետոյ թողեց զինաւորական ծառայութեան և սկսեց զբաղվել գանազան ֆինանսական և առևտրական օպերացիաներով, առերկր զվաւորապէս Պետերբուրգում Առևտրական ասպարիզի վրա նա ձեռք բերեց մեծ հարստութիւն, և իր հարստութեան մի մասը նա գործ դրեց դանազան բարեգործական և հասարակական նպատակներ վրա, որով և յայտնի դարձաւ հայ հասարակութեան: Պետերբուրգում Սանասարեանից զբաղական օգնութիւն են ստացել շատ ուսանողներ, հանդուցեալ օգնել է դանազան դպրոցներին և պահել է իր հաշուով որդեկները արտասահմանում: Նրա զվաւոր գործն է Երբ լուսի Սանասարեան դպրոցի հիմնելը, որի վերա հանդուցեալը բաւական խոշոր գումար է ծախել: Հանդուցեալը ամուսնացած էր, չունէր զաւակներ և այդ արդէն հիւր է տալիս կարծիք, որ հաւանականաբար նա կունենայ այնպիսի կրտսեր, որով իր մեծ հարստութիւնից նշանաւոր բաժին հանած կը լինի դանազան բարեգործական նպատակներ համար:

Հայոց «Գրամատիկական ակումբի» անդամները առաջին ընդհանուր ժողովը չը կայացաւ: Անդամները չը բարեհաճեցան ներկայ լինել ժողովին: Հետաքրքիր է իմանալ հիւրեր են այդ «ակումբի» անդամն անունը կրող օպերաները, որոնք այդքան անհոգ կերպով են վերաբերվում հայոց խեղճ թատրոնի գործին, այսօր-էտեց զգնելով գործը և տարիներով միամտացնելով հասարակութեանը, որ իբրեւ թէ թիֆլիսում կայ մի ինչ որ «Գրամատիկական ակումբ», որը մտածում է հայոց թատրոնի մասին:

Արտիստական ընկերութիւնը արդէն պատրաստութիւններ է տեսնում եկող սեզոնի համար թիֆլիսում օպերային խումբ կազմակերպելու:

Հայոց դանազան կոնսիստորիաների դէմ նորից սկսում են մեղ բաղմաթիւ դանազաններ ուղարկել: Կոնսիստորիաներին խնդրել են ներկայացնում ծննդականներ ստանալու համար. այդ հիմնարկութիւններին շատ լաւ յայտնի է, որ ծննդականներ պետք է ներկայացնել դպրոցական հիմնարկութիւններին մայիսի սկզբներին, բայց իմաստով այդ, նրանք էլ իրանց անհոգութեան պատճառով նեղ զրույթեան մէջ են դնում ծնողներին, ժամանակին չը հասցնելով ծննդականները: Երբ պետք է հասկանան դրանք, որ իրանք գործելուն ունեն ժողովրդի համար, ուրեմն պետք է աշխատեն ծառայել ժողովրդին և ոչ թէ ներգործել պատճառել նրան:

Շուշու թիմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազեանց ուղարկել է մեղ հետեւեալ հեռագիրը. «Ողջուն քեզ արեւ մշակ. յաղթանակը տօնիք քաջարի մշակ, որովհետեւ աղքի մտաւոր հողի վրա քո սերմնացած սերունդը պտուղ տուցին և այսօր հնձում են հոռնձը ու զուրկ պատկույթ: Աղաչում եմ Աստուծոց երկարացնել կեանքդ, աղղի մտաւոր առաջադիմութեան համար և ոչ տալ քեզ երկար ժամանակ անպարզելի վրա գործել: Իսկ դուք, յարգելի անձինք, որ հաւաքվել էք այսօր, գովաբանեցեք «Մշակին» իր արածի համար և ի յիշատակ նրա 25 ամեայ գործունէութեան յիշեցեք Աստուծու խօսքերը թէ՛ մշակը արժանի է իր վարձի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Արտասահմանի հայոց լրագրներում գտնում ենք հետեւեալ յօդուածը, որը արտատպւած է անգլիական լրագրներէից:

«Մանչեսթրի հայ հասարակութեան մէջ մեծ մասն երկուշաբթի դիւեր ժողով ըրին եկեղեցւոյն կից առաջնորդարանին մէջ, հրաւիրմամբ առաջնորդին Գեորգ Ս. Պարոնեան վարդապետին, որ ժողովոյն ներկայացուց զՊ. Թովհանէլեան, համակրելի, ուսնալ և աղագետ անդամ հայ գաղթականութեան ի Միացեալ Նահանգս, Ամերիկա Սոյս գաղթականութիւն տակաւին եկեղեցի չունենալով, ձեռնարկած է եկեղեցի մը կառուցանել: Մասնաւորաբար մը կազմուած է պետք եղած գումարն հանգանակելու համար, որպէս զի անմիջապէս ձեռնարկել շինութեան, և մասնաւորաբար ատենապետ պ. Թովհանէլեան նուիրաշաւարդութեան պաշտօնով զրկուած է Անգլիոյ և ցամաքային Եւրոպայի հայ գաղթականութեանց մօտ: Ամերիկայի հայ գաղթականութիւնն այս գովելի ձեռնարկութեան համար վստահ է թէ նպաստը չը պիտի պակսի իր աղագետից կողմէ: Պ. Թովհանէլեան երկար և շահաբեր ընտանաւորութիւն մընելով, մանրամասն բացատրեց թէ ինչպիսի հանգամանաց մէջ հարկ անհրաժեշտ համարուած է յԱմերիկա ուղղափառ լուսաւորչական եկեղեցի մը կանգնել և անոր կից դպրոց մը, եկեղեցին տարեց մարդկան բարոյական օգտին համար, և դպրոցը մանկանց և պատանեաց հիմնաւոր դաստիարակութեան համար: Յոյս յայտնեց թէ իւր հայ եղբայր պիտի համակրին այս ձեռնարկութեան և առատաձեռնօրէն սատարեն աւարտ յաջողութեան: Ծաւարտ բանախօսութեան պ. Թովհանէլեանի, քաղաքին հայ հասարակութեան շատեր առատաձեռնօրէն մասնակցեցան հանգանակութեան, առաջնորդութեամբ պ. Մարտիրոս Թօգատեանի, որ համակրալից բանիք պատասխանեց այն բանախօսութեան պ. Թօգատեան նաև չնորհակալեաց լուս առաջարկեց առ պ. Թովհանէլեան, և ժողովն այսպէս վերջացաւ»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիլհելմ կայսրը մտադրէ է Դանիայի թագաւորին այցելել Կոպենհագէնում, յունիսի 27-ին:

—Բերլինում համոզված են, որ Բելլաստադը անպատճառ կընդունի նոր վերաւորական օրինաւորներ:

—Կ. Պօլսից լուրեր են հաղորդում, որ թիւրքաց կառավարութիւնը Մակեդոնիայում զաւարդութիւն է բացել: Ձերբակալութիւններ են լինում:

—Իրանական տեղական իշխանութիւնը որոշել է արգելել իրանական կուսակցութեան միադիմումները առհասարակ, մասնաւորապէս միադիմումները, որոնք կը լինին յատկապէս իրանական հարցի առիթով:

—Իրանական պատգամաւորները միշտ այս օրերս ներկայացրեց պատգամաւորների ժողովին մի առաջարկ, որով առաջարկում է, որ ոչ մի պատգամաւոր մի և նոյն ժամանակ պետական որ և է պաշտօն չը ստանձնի: Այդ առիթով պատգամաւորների ժողովը մէջ առաջին աղմուկներ տեղի ունեցան: Առաջարկութեան անդին է պատգամաւոր կալաւորութիւն:

—Սօֆիայից գրում են, որ Պանիցա Կահալին կաշաւները տարով է կարողացել դանազան մարդկանց մասնակցել տալ դաւադրութեան գործում:

—Ճարմատական հանրապետութեան նախագահ Կարնոն Ճարմատայի դանազան կողմերում վերջին օրերս կայացած հասարակարկութեան միջոցին, ազգաբնակչութիւնը համակրական մեծ ցոյցեր է արել: Կարնո վայելում է ժողովրդի սէրը: —Անգլիական համայնքների ժողովում վերջին ժամանակներս քննվում է խմբիցներ վաճառող պանդոկները փակելու կամ տանձնատիրակելու խնդիրը:

—Բելգիայի թագաւորը նորերս առաջարկել է անգլիական առաջին մինիստրին մի անգլիսի օրէնք հաստատել, որով Անգլիան պարտաւորութիւն յանձն առնել արտօրել իր սահմաններից անարխիստներին: Լորդ Սըլլիվերի սկզբունքով հասարակ լինելով թագաւորի մաքի հետ, յայտնել է, որ այդ մաքի իրաւորութեամբ առ այժմ անյարմար և վաղաժամ է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի օրն Ջուլիի Լօնդոնում 40 օր շարունակ քաղցած մնաց (ծով պահեց): Այդքան ժամանակամիջոցում նա միայն ջուր էր խմում և նրա

քաշը 30 ֆունտ պակասեց: Բայց դրա փոխարէն նա ստացաւ ոսկեայ մէդալ և մօտ 18.000 րուբլի փող:

Բժիշկ Բառման, որը Միջազգեւորական վերջին խօսքային համաժողովումն էր ուսումնասիրում, թիւրքաց քաղաքների ամենապարական դրութիւնը դարձուրելի կերպով է նկարագրում: Բաղդադում խօսքայի մասին ճիշդ չէին և նշանակութիւն չունէին, քանի որ տեղական բնակիչները, վախճաւով կարանտինից և չուղենալով ենթարկվել կառավարչական կարգադրութեանը, որով հրամայվում էր այրել հիւանդների շորերն ու կահկարասիները, — քաղաքի էին պահում հիւանդութեան երեսը և ծածկում էին հիւանդներին:

Արտասահմանեան հայոց լրագրներում կարգում ենք հետեւեալ. «Հաշվել քրիստոնէայէ և հրէայէ վերջին օրերս կտիւ մը ունեցեր են, ջրօհորի մը խորը քրիստոնէայէ տղու մը դիակը գընտուելուն պատճառաւ, որ փոտիլ սկսած էր Բժշկական ընտելութեամբ հաստատուել է թէ դիակը մէկ ամսէ ի վեր ձգուած էր ջրօհորին մէջ: Քրիստոնէայէ հայի ընկող թէ՛ մահուան թուականը կը համապատասխանէ հրէից Պասէի օտոնին, հին նախադասարանից վրա յենյով հետեցուցած են թէ իսրայէլացիք սպանած էին տղան և արկնը գործածած էին: Ասոր վրա հակադասութիւնը ծագել են երկու հասարակութիւնաց միջև: Տեղական իշխանութիւնը դժուարաւ յայտնել են միտքերն հանդարտեցունել, ամեն կերպ խուզարկութեանց ձեռնարկելով, քրիստոնէայ տղան մահուան պարագայները դիտենալով համար: Առայժմ ոչինչ երևան ելած է»:

Գեղարուեստական արդիւնաբերութեան և դիտութեան միջադասային կոնգրէսը բացվելու է Պարիզում յուլիսի 9-ին:

Անգլիական հեռագրատնիքում ծառայող ժողաւորի վերջին ժամանակներս շատ դժգոհ են հեռագրական վարչութիւնից այն առաւելութեան համար, որ արվում է հեռագրական կլին-ծառայողներին: Վերջիններս միայն ցերեկն են բանում, և կիրակի օրերը բոլորովին ազատ են: Ձը լինի թէ չուտով անկախ աշխատող կանանց և տղամարդկանց մէջ այնպիսի թշնամութիւն ծագել, որ զեղեցիկ ստեղծ տրիպուլ լինի բացարձակ կուր յայտնել Աղամի ժամանակից մինչև այժմ տիրապետող աղամարդուն:

Գերմանական լրատուագի անդամների թուում կան 18 դրոյ, 8 հրատարակիչ, 1 նկարիչ և 1 լեպորատոր:

Բօլսարական մի փոքրիկ քաղաքում վերջին ժամանակներս իր գեղեցկութեամբ ահալին հրուշակ էր ստացել մի 20 տարեկան օրիորդ, որի ձեռքը ամենքն էլ խնդրում էին, բայց որից աւմենքն էլ մերժում էին ստանալ: Վերջապէս մի օր դ և դ ե կ ու հ ի ն համբերութիւնը հասած աւսեց. «այլ ես անտանելի է կնոջ շորերի մէջ մնալ, ես տղամարդ եմ...» Եւ յայտնեց, որ յիշաւ նախկին օրիորդը աղամարդ է, որը օրիորդի դիմակի տակից դուրս գալուց յետոյ շուտով ընդունվեց զինւորական ծառայութեան մէջ:

Լօնդոնում այս օրերս բացվեց պօստային մարկաների ցուցահանդէս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մայիսի «Սեր. Բեք.» լրագրերը լսել է լու աղբիւրից, որ ֆինլանդական պատաւային հիմնարկութիւնների Ռուսաստանի հետ միադիմումները հարցը վերջականապէս վճռված է: Ֆինլանդիայի պատաւային վարչութիւնը ենթարկվում է պատահաւորական գլխաւոր վարչութեան:—«ГЛАВНАГО» լրագրերը հաղորդում է, որ ասիական նահանգներում ճանապարհորդելու համար ֆինանսների մինիստրը գործ կը դնէ 45 օր օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:—Այն լուրերը, որ իբրեւ թէ փոփոխութեան միջոցով պիտի լինեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան բարձր պաշտօնանիների մէջ, անհիմն են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի: Նրէկ խտրական թագաւորաւոր Մեծ Իշխաններ Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, Գեորգ Ալեքսանդրովիչի և Ժուլիան մինիստրութեան կառավարչի հետ «Ալեքսանդրիա» կայսերական նաւով գնացին Կրօնաշատ, որտեղից, նուաճանդատներ և նաւերը տեսնելուց յետոյ, արլինքը նոյն նաւով Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչի հետ գնաց Պետերհօֆ, որտեղ տեսաւ պալատները: Հայից յետոյ, որը տեղի ունեցաւ Պետերհօֆի մեծ պալատում, պրինց և Մեծ Իշխանը վերադարձան Պետերբուրգ, երկաթուղով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ		
000.81	Մայիսի 22-ին	
1 ժողովի վրա 10 ֆունտ արծե.	86	10 4.
Բերլինի վրա 100 մարկ	42	10
Փարիզի վրա 100 ֆրանկ	34	15
Ոսկի արծե.	6	95
Մարտիայի կուպոններ	139	—
Ռոմայի	1	81/2
Բորսային գիտություններ	51/2	79/8
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	99	75
— 2-րդ	100	—
— 3-րդ	99	75
— 4-րդ	99	75
— 5-րդ	99	50
— 6-րդ	99	75
6% ոսկեայ բնառ	146	—
4% ոսկեայ փոխառություն	—	—
Արևելյան 5% փոխառ.	1-ին շրջ.	99
— 2-րդ	99	75
— 3-րդ	100	12
Ներքին 5% առաջին փոխառութ.	229	—

— Երկրորդ	212	75
— Երրորդ անգ. կառ. բ.	210	50
Պետական. երկաթուղային բնառ	100	25
51/2% բնառ	103	50
4% ներքին փոխառություն	86	75
5% գրառ. թղթ. անգ. կառ. բանկի	—	—
4% վկայակ. գիտ. հող. բանկի.	103	50
41/2% գրառական թղթեր կառուած.	—	—
փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ.	136	25
— թղթաղ.	96	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	—	—
ընկերության օրինգայինները.	95	87
Մոսկովայի քաղաք. օրինգայիններ.	94	75
Օգեսայի	94	50
Թիֆլիսի	—	—
Գրառ. թղթ. Թիֆլիսի կառ. բանկի.	—	—
Գուժայիսի	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրություններ		
ամբար է:		

Խաղաղի-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ԹԵՄԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ

կարգադրություններ Մայիսի 27-ին, կիրակի օրը ժամի 12-ին, ս. պատարագից յետոյ կատարուելու է քաղաքի նորաշէն Ս. Աստուածածնի եկեղեցու եկեղեցական-ծխական ուսումնարանի հոգաբարձական ընտրության համար պատգամաւորների վերջնական ընտրությունը նոյն ուսումնարանում:

Յիշելու ուսումնարանի մեծագոյտիւ ծխականները հրաւիրուի են նշանակված օրը մասնակցելու ընտրությանը:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկազմության վերաբերեալ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց:

1—2

ՆԻԻ-ԵՐԿ

ԸՆԿԵՐ ԿԵԱՆՔԻ Փ. ԱՊԱՀՈՎ.

ԿԵԱՆՔԻ ՓՈՒԱԳԱՐՁ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ «ՆԻԻ-ԵՐԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ կանգ առաւ հովանիի ցանկացողներին խնդրուեալ դիմել, զրան վերաբերեալ բժշկական խորհուրդներ քաղելու համար, բժշկական ՆԱԻԱՍԱՐԻԵՆԻՆ:

ՏԵՍՈՒՋ Կանգել Փ. Ապ. «ՆԻԻ-ԵՐԿ» ԸՆԿ. ՄԻԱՅԼՈՎ.

2—3

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻՆԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՌԻ ՆԻ ՓԶԱՆԱՆՈՒ ԴԵՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՐ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՐ ԷԼԻԿԱՐԻ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՐ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀՆԱՍ.

ԹԻՖԼԻՍԻՍԻ Գեղարքածական պարանոցների կազմակերպիչ ընկերության մէջ է պ. պ. Շահ-պարտեանցի, Մակիկերի, Սէնչի-կովսկու և Արմաւուրի գեղարքածական:



13—52 (Հ.)



Ս. Գ. ՅԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՅՈՑՆԵՐԻ ՄԱՐԱԶԻՆԻ ՕՊՏԻԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պատրի աշու զիմաց, անկեան մագաղնում, առաջված է մեծ ընտրություն ոսկեայ, նոր ոսկեայ, Նիկեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՐ: Թաղարանական և դաշտային ԲԻՆՈՎԼԵՐ, ԶԵՐՄԱԶՈՒՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանանների համար վերատառված և վկայական ունեցող ՄԱԿԱՄԱՆ ջրափայտիկ Լորենտի և պենտեի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մուգաբեայ և մի-տալական թելեր:

Այնպէս և պենտեներ արվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մաղաքներում բանն են առնում նմանապէս փաշած իրերի նորոգելը և ապագիների դնելը:

ԳԵՆԵՐ ամենապարագայի են:

18—50 (Հ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուկիա, մի օրոցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՐՈՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ—9—11 ժ. վիրաւուծութեան (և առանցապէս) սիֆիլիսի և աչքացաւի: ԲՈՒԴՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆԻՔԻՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—10 1/2—11 ժ. կանանց և երեխայոց ց. ԿԱՐԱՊԵՆԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի: ՊՐՈԶՈՐՈՎՍԿԻ—12—1 ժ. ներքին, կանանց և երեխայոց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳՎԻՍՄԱՆ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՓՈՒԴԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էլեկտրոտրակիա): ԿԵԶԱՆԻՆՈՎ—6 1/2—7 1/2 ժ. վերաբուծ. (և կոկորդի, ականջի, քթի ց.) և վնասի. ց. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ—6 1/2—7 1/2 ժ. վնասի. ց. ՎՏԱՐ—50 Կ. Համալսարանի (կոնսիլիումի) համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուէ բժշկական ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ

Պատիւ ունիմ յայտնելու մեր ուսումնարանների հոգաբարձուներին, ուսուցիչներին և դասուական գրաւաճառներին, որ այս 1890 թուականի ապրիլի 1-ից են հրաւարուել եւ կենդանական գրաւաճառանոցին մասնակցելուց: Հետեալը այն հիմնարկութիւնն է, որը և այն անձինք, որոնք այդ խանութի հետ որ և է հաշիւ ունին, այսուհետեւ պիտի զիմեն նորա ներկայ տէր և կառավարիչ պ. Աբգար Յովհաննիսեանին և Ստեփան Տէր-Խարաչեանին: Հետեալով գրաւաճառանոցից են բաց եւ անում Թիֆլիսում մի ՀՐԱՍՈՒՐԱԿԱՆ ԳՐԱՍՆԵԱԿ, որի նպատակն է նորանոր հրատարակութիւններով զարգացնել դպրոցական գրականութիւնը և պատրաստել մանկական ընթերցանելի գրքեր: Առ այժմ իմ գրասենեակին կից վաճառվում են հետեալ հրատարակութիւնները, որոնց են բա- ժանում եւ երկու դասակարգի ուսումնարաններին և գրաւաճառներին գրուելիք գեղջի քանակութեան կողմից:

Ա. ԳՐԻՔԵՐ, ՈՐՈՇ ԶԵՂՋԸ 25% է:

1. Աղայեանց՝ Ուսումնի Մայրենի Լեզուի, ա. տարի	25	4
2. » Ուսումնի Մայրենի Լեզուի, բ. տարի.	40	4
3. » Ուսումնի Մայրենի Լեզուի, գ. տարի	55	4
4. Գեորգեւեան՝ Ժողովածու թուարանական խնդիրների՝ մասն առաջին.	40	4
5. Մանդինեան՝ Հաշուարանական աշխարհ.	65	4
6. » Հինգէլի՝ բանաւոր և դրաւոր հաշուելու խնդիրներ առաջին և երկրորդ տարի.	40	4
7. » Բանաւոր և դրաւոր հաշուելու խնդիրներ երրորդ տարի	50	4
8. Տէր-Ղևնդեան՝ Մայրենի Լեզու առաջին տարի	35	4
9. » Մայրենի Լեզու երկրորդ տարի	40	4
10. » Մայրենի Լեզու երրորդ տարի	45	4
11. Տէր-Ղևնդեան՝ Русское Слово	50	4
Բ. ԳՐԻՔԵՐ, ՈՐՈՇ ԶԵՂՋԸ 35% է:		
12. Մանդինեան՝ Ընտանեկան Աշխարհ	75	4
13. » Գիւցաղեան Աշխարհ	30	4
14. Տէր-Ղևնդեան՝ Մայրենի Լեզուի քերականութեան տարեբը, մասն առաջին.	30	4
15. » Մայրենի Լեզուի քերականութեան տարեբը, մասն երկրորդ	50	4
16. Հայրապէ՝ Սրբազան պատմութիւն Հին կտակարանի	50	4
17. » Սրբազան պատմութիւն Նոր կտակարանի	50	4

Գ. Մինչև սեպտեմբերի մէկը պատրաստ կը լինեն հետեալ գրքերը՝

1. Տէր-Ղևնդեան՝ Մայրենի Լեզու, երրորդ տարի, վեցերորդ տպագրութիւն, բարեփոխած և բաղմա- թիւ արձակ և չափաբանական յօդուածներով հոխարած:	
2. » Մայրենի Լեզու, չորրորդ տարի, երրորդ անկախ, ինքնուրոյն տպագրութիւն, որ բոլորն զաւարտ է իւր մէջ, բացի ընդհանուր գրական յօդուածներից, նաև բարձրակի յօդուածներ բնագիտական, աշխարհագրական, և ըստ չափ ու պատմական բովանդակութեամբ:	
3. Թուանեան՝ Դասագիրք Ռուսաց լեզուի, Հայոց ուսումնարանների համար, առաջին տարի երկրորդ անգամից հինգանիկ այս առաջին երախայրից, որ շատ պիտի հեշտացնի ուսուցիչ լեզ- ւի դասանդութեան դիմաւորին դործը Հայոց ուսումնարաններում:	
4. Տէր-Ղևնդեան՝ Մայրենի Լեզուի քերականութեան տարեբը, մասն երկրորդ, երրորդ տպագրութիւն:	

Հրաւիրում եմ ցանկացողներին ուղարկել ինձ տպագրուող Հայերեն գեղարքածական օրինակներ, որովհետեւ ներկայումս գեղարքածական համար ոչ մի ձեռնարկ չունիք հրապարակի վրա:

Ամառնապէս մեզանից գրքեր պահանջողները պէտք է ինկաթի ունենան հետեալ պայմանները:

1. Գրքերի որոշեալ գեղջի վերջնական է, ինչ քանակութեամբ էլ առնելու լինին:
2. Գրքերի վաճառուը կանխել է: Ապառիկ ոչ-դր գիր չի ուղարկելու, բայց ցանկացողների համար գրքերի արժէքը կարող ենք վերադրել անի, որ նորա վճարին այն փաստային վարչութեանը կամ կանտորին, որի միջոցով պիտի ստանան գրքերի ծրարը կամ մուրօլը:
- 3) Գանձանայի դէպս պահանջած գրքերի ընդհանուր արժէքի մի չորրորդական մասը անպատ- ճառ պիտի ուղարկուի պահանջի հետ, կանխիկ, մնացածը կարելի է վճարել ապրանքն ստանալու ժա- մանակ:
- 4) 25—35% գեղջիով գրքերի տպագրական գինից, բոլոր գնողների վրա բարոյական պար- տակաւնութիւն ենք դնում գրքերը վաճառելու ժամանակ, մանաւանդ դասուներում և յետնեւած անկեններում, այլ են վերադրել չանիկ տպագրական գինից:

Խոնարհաբար խնդրում եմ իմ բոլոր ծանօթներին, բարեկամներին և այն յարգելի անձանց, որոնք ինձ հետ դործ են ունեցած և որոնք դարձեալ ցանկանում են դործ ունենալ իրանց նամակներն ու գրութիւնները այլ ևս չուղղեն Կենտրոնական գրաւա- ճառանոցին, այլ պարզապէս ուղարկեն իմ անունը՝ Նիկոլայու Տէր-Ղևնդեանին, Թիֆլիս կամ Николаю Тер-Гевондыанъ. Тифлисъ, Հասցէս փոստատանը յայտնի է: Գրքերի պահեալը առ այժմ գտնվում է Ս. Վարդանանի տպարանին կից, Տրոյեցկի փողոցում:

Նիկոլայու Տէր-Ղևնդեան

2—3

Լոյս տեսաւ

ԲԱՐՍԵՂ ԲԱՄԱՆԵԱՆԻ

Վեցերորդ հրատարակութիւնը՝

ԱՆՆԱ ՄԱՐՈՅԵԱՆ

Հաիւրը: Գրեց

ՆԱՐԴՈՍ

Վաճառվում է բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: Օտարաբարաքցիք զի- մում են հրատարակել. Тифлисъ, Василию Камалянъ.

Գինն է բոլոր տեղերի համար 30 կոպէկ:

5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԲԱՅՅԻԻ

»ՀԱՅ ԿԻՆԸ, ԵՒ «ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»

Գինն է 1 լուբլի 50 կոպէկ:

Վաճառվում է հեղինակի պրիւի մօտ:

Հասցէն Садовая улица, домъ довт. Лисицева № 29, Аннѣ Меликъ-Аво- пиянъ.

4—10